

891.99

4-15

Վ. ՎԱՆԴԻՆԵՆ

ՏԱՒԱՐԻՇՉ ԼԻԻԲՐ.

ԳԼՆ 3 ՔԲ

ՅԳ. "ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՂ"

ԴԷՂՈՒԹ

1928

-6 NOV 2011

891.99

4-15

Վ. ՎԱՆԵԴԵՆ

ՏԱԽԱՐԻՇԶ ԼԻԻԲՐԱ

[Handwritten signature]

ՏԳ. "ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ",
ԳԵՂՈՒԹ
1928

~~891.99~~
8180

Հայրապետ թորման

ՏԵԽՆԻԾԶ ԼԻԻՐԱ

Միշտ հասակ մի բիշ հաստիկի մանկամարդ կին՝ կուր
 թուխ դեմքով:

Հանգիպեցի նրան քսան թւի ամառը Գլխիշանում:
 Հանրային պարտիզի ծառուղիներից մէկում, իրիկնադա-
 հին, երբ նորանոր պէսեր էին վառւել պարտիզի ճրագները:

Հանգիպումիս հազիւ նախընթաց օրն էի եկել Գլխիշան:
 Հիւր պիտի մնայի իմ հօրեղբորս որդու՝ Արամ Սարգսեանի
 մօտ, որ ձմեռանից այնտեղ էր ապրում՝ Գիւղատնտեսական
 հրահանգչի հանգամանքով իբրեւ կառավարական պաշ-
 տօնեայ:

Այն իրիկուն Արամի հետն էի գնացել ուսումը (հան-
 րային պարտեզ): Քայլում էինք միասին... և այն կինը աչ-
 քիս դիպաւ՝ մեր ընթացած ծառուղիի հակառակ կողմից
 խտանալ սկսող ստւերների դեռ նօսր մ/ծուլքան աննշմար
 ֆօսի վրայ, որն ինձ այն պահին՝ երերուն լծաց... գուցէ
 որովհետեւ երերուն էր կնոջ քաղաածքը:

Գլուխը բաց էր, մազերը ցրիւ ու լծափ/ծիւած, գան-
 գուռ... (սիրահար եմ այդպիսի մազերի):

Դիմացից գալով, երբ ձեզ հաւասարեց, նա ինքն առա-
 ջինը բարեւ տաւ՝ Արամին կանխելով...

— Բարի՛ երեկոյ:

Չաշնր բամբ էր ու հնչեց վճռական լծոնով: Մինչև...

1393-2001

երբ Արամը պատասխանեց բարեին, ինձ թաց որ նրա ձայնի մէջ տարտամութիւն կար, նաեւ ինչ որ մի դժկամանք

Առանց կանգ առնելու, էինն անցաւ, իր ճամբան շարունակեց: Ես յետ նայեցի — քէլքը նրա երերուն՝ մեղմիկ ալիքների երեսին օրօրեղ նաւակի տպաւորութիւնը ձգեց վրաս:

Բաց-դեղին գլխի չէս ու չա շոր էր հագին, որ թափծու ծալքերով սրթսրթում էր մէջքին, աղբերին:

— Ով է, Արամ, — հարցրի ես փութկոտ հետաքրքրութեամբ.

— Պետքդարդի Հոգե-Ներդաբանական ճեմարանի ուսանողուհի... Սիրանոյշ Աւետիսեան. Ղաղախեցի մի բահանայի ալջիկ: Գրոջ մօտն է այստեղ:

Ես չգիտացայ այդքանով, մանաւանդ որ Արամը իր տեղեկութիւնները տաւ՝ այն միւսնոյն անտարբերութեամբ որով նա պատասխանել էր կնոջ բարեին: Ես շարունակեցի, հարցումներս —

— Ինչպիսի՞ աղջիկ է: Երկար կմնայ այստեղ... վաղուց է ծանօթ ես հետը:

— Անցեալ աշնանը ծանօթացանք, թիֆլիզում:

— Զարգացած է, խելացի՞:

— Բաւական: Դատ գիրք է կարդացել: Շնորքներ էլ ունի — դաշնակ նւագել, պարել...

... «Ինչու հապա այնպէս կոպտութեամբ վերաբերւեցիր նրա ջերմ բարեին» — անցաւ մտքովս և այդ միջոցին պահանջը զգացի հասկանալու՝ արդեօք Արամն իսկապէս անտարբեր էր դէպի իր ծանօթուհին, թէ՛ նա սոսկ ձեական ստանութիւն էր ցուցադրում՝ ինձնից ծածկելու համար իր սիրայ ին յոյգերը, որ թերեւս բուռն են ու խորունկ:

Զգացի ևս յանկարծական չկամութիւն, իւրատեսակի մի խանդ. չուզեցի որ Արամը սիրահարած լինէր այդ սիրունիկ ուսանողուհուն:

Այո, ես ինքս հաւանել էի նրան, առաջին իսկ հայեացքից հաւանել: Ա՛ն աստիճան, որ մինչև անգամ խանդը տեղ գտաւ հոգուս մէջ: Ախր, ես իմ բնաւորութեամբ յախուռն տպաւորութիւնների մարդ եմ: Հուտ աղբուղ, շուտ գրաւող: Ու առանձնապէս՝ յաճախ այն հակասութիւններին եղծալայ, որոնք խռովք ու պայքար են ստեղծում մեր բանականութեան ու մեր զգացմունքների միջև:

Ինչևիցէ, Հոգե-Ներդաբանական ճեմարանի ուսանողուհի Սիրանոյշը հրահրել էր իմ հետաքրքրութիւնը. և ես շատ ախարացի որ այն իրիկուն՝ նա սլակս չերեւաց ուսունդում: Զո՛ր որոնեցի նրան զբօսնող հասարակութեան մէջ, որ հետզհետէ աւելի ստաւայած՝ բոլոր ծառուղիները լեցրեց:

Երբ տուն դարձանք — ես արդէն մտադրաւ էի: Չբար խօսելու տրամադրութիւն իսկ: Ընթերցելիք գրեթէ չուրեան: Միայն ասի —

— Տօ, Արամ... վաղն էլ թէ որ հանդիպենք քո էդ ուսանողուհուն, ինձ ծանօթացրու հետը... հը՞:

— Լաւ:

— Քեզ համար հօ դժւար էի՞ լինի:

— Ոչ:

Պատասխանները կարճ էին ու խաղաղ: Արամի ձայնի մէջ չնկատեցի ոչ մի դժկամանք կամ երկբայութիւն: Եւ ես անկողին մտայ մի անգամայն հանդուստացած, որ —

«Զէ՛, Արամը նրանով զբաղւած էի: Ուրեմն ասպարեզն աղատ համարեմ»:

Առաւօտը շուտ զարթնեցի՝ սովորութեանս հակառակ: Թէլից յետոյ, Արամը գնաց իր գործի: և պիտի վերադառնար հազիւ ժամը 3-ին: Ես որոշեցի գինել համբերութեամբ՝ սպասելու համար մինչև իրիկուն, որպէսզի ապա՝ Արամի հետ միասին ուսունդ գնայինք: Չուզեցի մենակ դնալ: Արամի ուղեկցութիւնն անհրաժեշտ էր ինձ, որպէս միշտ՝

օրիորդ Միրանյշի հետ ծանօթանալու համար :

Սակոյն համբերութիւնս շուտ խախտւեց : Այն ժամ հաղիւ էր անցել Շրամի հեռանալուց յետոյ . — է՛յ չգիմացայ : Դուրս ելայ ու շիտակ՝ ոտոնդը գետցի, մինչեւ կէսօր սլնտեղ մնալու մտադրութեամբ : Գիրք վերցրի հետո՝ որ կարդամ, ժամանակս, անցկացնեմ . . . Բայց թէ դա է՛, իմ բուն նպատակը . այլ ես ննթադրութիւններ արի թէ՛ «նա էլ, մի գուցէ, այնտեղ գայ . . . և ես կսպասեմ» թէ՛ կուզ . . . մինչև որ հանդիպեմ : Իւ վճռել էի, որ եթէ հանդիպեմ իսկս պէս՝ ինքս մօտենամ ու ծանօթանամ :

Անթադրութիւն — հաշիւներս արդարացան միանգամայն . իմ սպասածից աւելի մեծ չտիրով : Օր . Միրանյշին ինչս արդէն ոտոնդումն էր (յետոյ իմացայ իրանից, որ սփորութիւն էր ունեցել գալ այնտեղ ամէն առաւօտ ու մնալ մինչի կէսօր) :

Դստած էր գլխաւոր ծառուղիից . ինչ անդին, մի բաղմաճիւղ ակացնող տակ, կանաչ ներկած նստարանի վրայ : Երբեք էր կարդում : Իսկոյն նկատեց ինձ, և ես շփոթւեցի բաւական . . . վաճառի փութկոտ ու միաժամանակ սեւեռուն թւաց ինձ նրա հաւացքը :

Չիմացայ, ե՞ս արի առաջին շարժումը թէ՛ նա՞, — միայն թէ բարեկեցիք իրար՝ նրկուսս էլ միաժամանակ գրեթէ : Իս գլխարկս բարձրացրի, նա գլխով արեց . . . ու ապա՝ ես մօտեցայ, միմեանց ձեռք տւինք :

«Ուրեմն ծանօթացանք» — ասի մտքումս և ապա աւելացրի բարձրաձայն .

— Նոր ենք ծանօթանում թէ՛ և, սակայն ինձ թւում է՝ թէ մենք առաջուց էլ ծանօթ ենք եղել :

Այդ ասելիս՝ ես ժպտացի : Օրիորդն էլ աշխուժօրէն ժպտաց . եւ պատասխանեց .

— Այո, ծանօթ . . . նրեկանից, երբ դուք աշտակ դրանում էիք . . .

— . . . Արամ Սարգսեանի հետ, — վրայ բերի՝ ևս ու մէկէն ծիծաղեցի՝ ինքս էլ չիմացայ ինչո՞ւ :

Ծիծաղս անտեղի թւաց ինձ և ես փոքմանեցի անմիջապէս, մանաւանդ երբ տեսայ, որ օրիորդը լրջացաւ վայրկենապէս :

Իրաւ, լրջացումը շատ չտեսեց, հէնց յաջորդ վայրկեանից իսկ ժպտող նորէն փայլեց օրիորդի աչքերում ու շուրթերին : Այնուամենայնիւ՝ ես ելրակացրի, որ կա՞մ ծիծաղս իսկապէս շատ էր անտեղի կա՞մ թէ Արամի անունն ինքնին հաճելի չեղաւ խօսակցիս համար :

Այսպէս թէ այնպէս, շուտով սկսեց մեր մէջ մի կենդանի, բարձրանդ գրոյց : Հոգեբանութիւն և բարոյագիտութիւն, ուսման թիւղձ և ուղիղութիւն, պատերազմ և խաղաղութիւն, գրականութիւն և երաժշտութիւն . . . շատ, շատ հարցեր, իրար կապւելով, եկան ու եկան՝ ու լցրին մեր խօսակցութիւնը բերնէ բերան :

Տուն վերադարձայ խիստ գոհ տրամադրութեամբ, ամենահաճելի տպաւորութիւններով բեռնւած : Ընդերձ երեք ժամ էի մնացել օրիորդի հետ : Իւ եթէ նա ինքը չասէր թէ՛ «հիմա արդէն ժամանակն է — ցտեսութիւն», — ևս դեռ էլի՞ երեք — չորս ժամ կը շարունակէի խօսել :

— Այո՛, քեզ սիրուն, հետաքրքրաշան աղջիկ — ասի ինքս ինձ, տուն դառնալիս, մի քանի անգամ :

Ես սիրահարուել էի : Երբեք . . . առաջինում էլ պատահել էր ինձ՝ վառուել ու ոգեւորուել կարճ ժամանակաց մէջ :

Արամն էլ յետ և աւելի գործից : Ճաշեցինք ու նստանք հով պատշգամբին՝ որ նորից խաղանք մի քիչ : Նա մը, տաղբաղ թւաց ինձ, Ես սկիւբեց հէնց, ճաշից առաջ, նրան պատմել էի օրիորդ Միրանյշի հետ ունեցածս տեսակցութեան մասին, ուստի և կասկածելով մի պահ էնթադրեցի թէ մի գուցէ այդ բանն էր աղբիւ Արամի վրայ : Ինքս չիմեղով խանդոտ բնաւորութեան տէր՝ ուրիշներին էլ խան-

գոտ եմ կարծել յաճախ :

Սախյէ, շուտով միամտեցի, երբ իմացայ Արամի մշտադադութեան իսկական պատճառը: Նա ինքը յայտնեց, առանց որ իմ կողմից՝ հարց տրւած լինէր, — հետեւեալը.

— Բողջեւիկները նորից սկսել են գործել Հանրապետութեան դէմ: Ղաղախի սահմաններում զօքք են հաւաքում: Էլ ի՞նչ, ուրեմն, մենք հարկադրւած պիտի լինենք զէնքով պաշտպանելու... անիրաւունք:

Արամը Դաշնակցական էր՝ աքի ընկնողներէ: Դիլիջանի շրջանի կեդրոնական Մարմնի անդամ էր, եթէ չեմ սխալւում: Մասնագիտութեամբ գիւղատնտես-քիմիկոս, նա իր ժամանակի ու եռանդի մեծագոյն մասը գործադրում էր կուսակցական աշխատանքների համար: Առաջներում էլ, երբ Արամը դեռ յստանող էր, իմ ճանաչած Դաշնակցականներից ես միշտ էլ գովասանք էի լսել նրա մասին: Այն ժամանակներից արդէն՝ լրջամիտ, անձնէր, գաղափարական տղայ էր:

Ես ինքս՝ անկուսակցական եմ. այսինքն՝ հեռու եմ պահել ինձ քաղաքական հարցերից: Արեւստի մարդ եմ, և համարել եմ բոլոր կուսակցութիւնները՝ անարդար և անիմաստ: Բայց ամէն անգամ, երբ թէկուզ մէկ-երկու օր Արամի հետն էի լինում, — համակրութիւնս դէպի Դաշնակցութիւնն էր հակուում, որովհետեւ ես չէի կարողանում չենթարկել Արամի անձնական ազդեցութեան, որ հմայիչ էր անպայման: Համոզւած, սրտաբուխ յեղափոխական իր ողջ էութեամբ, Հայրենասէր՝ մղկեռանդութեան աստիճան... Ուստի, ինձ համար հասկանալի էր այն մտահոգութիւնը, որ պաշարել էր նրան:

Ես էլ, սակայն, իմ մտահոգութիւնն ունէի այն միջոցին երբ վերոյիշեալ տեղեկութիւնն ինձ հաղորդելուց յետոյ՝ Արամը թողեց նարդին ու սկսեց քայլել պատշգամբի երկարութեամբ, միտքս՝ Վիրանոյշի կողմն անցաւ: Ուզում էի նո-

րից տեսնել նրա հետ՝ նշյն իրիկունն եւեթ... Սրա՛մն էլ թող հետս գար ուստոնդ: Զէ՛ որ ինքն էր ասել առաւօտը թէ՛ «Ես իրիկուն կերթանք: Նւագածութիւն կ'լինի»:

— Ու եմն, — անվստահօրէն. փորձեցի իմանալ Արամի տրամադրութիւնը, թէ արդեօք կերթայ՝ ուստոնդ, — ուրեմն... Ի՞նչ ենք այս երեկոյ անելու:

— Ես չեմ կարող գալ — պատասխանեց՝ նա՝ քայլերը չնդատելով, — ժողով ունիմ: Ինքդ գնա մենակ:

«Ի հարկէ կգնամ» — չարածձիօրէն մտածեցի ես. ապա հարցրի:

— Քո կողմից բարե յոյտնե՞մ օրիորդին.

Անպատակ մի հարց էր, որ հէնց այնպէս՝ ձեւի համար ստի: Եւ սպասում էի, որ Արամն էլ, դարձեալ թէկուզ ձեւի համար, պիտի պատասխանէր՝ «չա՛, բարեւի՛ր եթէ հանդիպէս»: Սակայն, սպասածիս հակառակը դուրս եկաւ...

— Ոչ, — պատասխանեց անմիջապէս և կտրուկ կերպով՝ գրեթէ կոշտութեամբ, — Հալկաւոր չէ՛... չբարեւե՛ս:

— Ինչո՞ւ ասի:

— Որովհետեւ... Հարկաւոր չէ մի խօսքով:

Եւ ուրիշ ոչ մի բացատրութիւն ալ չեւ: Ես էլ զսպեցի, հետաքրքրութեամբ, բան չհարցրի: Սակայն, խորհեցի թէ՛ «Մե՛ր տղայ, դու ո՛չ միայն անտարբեր ես դէպի Սիրանոյշ, ալ նոյնիսկ կոպիտ: Բայց ինչո՞ւ»:

Տարակուսած ու լուռ ձիւքս առի գիրքը, որ առաւօտեան տարել էի ուստոնդ, բայց որի մի երեսն հսկ չէի կարողացել կարդալ: Այս անգամ դոնէ կարդայի մի քիչ. Սակայն չեղաւ: Ուշք-միտքս վայր իջնող արեւի կողմն անցաւ, թէ երբ վերջապէս նա մայր պիտի մտնէր, որդէսդի ժամանակը հասած համարէի՝ ուստոնդ գնալու:

Արեւի ճառագայթներից գունաւորող, վառող ու քուլա-քսուլա դիլւոլ ամպերին մոտիկ տալով՝ Հարունակ

Մ'ընայլի գէ՛հքն էի տեսնում... Ու մէ'կ էլ՝ թւաց ինձ, որ ես լսեցոր մի տաղ տեսած էի նրան: Արմենկներովս պատշգամբի բաղրոցին յենած՝ նստում... բայց չկարողացայ մտաբերել թէ երբ եւ ուտե'ղ էի հանդիպել այդ աղջկան:

Յոգնեցի վերջը եւ երեսս դարձրի՝ արեւից ու ամպերից: Արամն այլեւ չէր բայլում (նա՛ էլ յոգնել էր, երեւի). մէկ-դի կանգնել, ուսը պատշգամբի ծալրի սիւնին դէմ տաւ, ընկել էր մտքերի մէջ...

Կողմնայի՛ լոպէ՛ առաջ դուրս գալ տնից: Համբերութիւնս սկսեց սպառուել... Եւ ահա՛ հէնց այդ սպասումի ու անհամբերութեան է՛ն սուր միջոցին տեղի ունեցաւ մի անակնկալ դէպք, որը տակնուվրայ արեց ցանկութիւններս ու ծրագիրս. եւ այն իրիկուն՝ ես այլեւս չկարողացայ գնալ ուսումնո՛ր:

... Մի նամակ բերին Արամի հասցէին: Փոքրագիր գունաւոր ծրար: Բերողն էլ՝ մի պատանի: Արամը վատ, ազդեց՝ հէնց որ նամակաբերն երեւաց պատշգամբի սանդուխքի գլխին: Գծկամակօրէն առաւ ձեռքից նամակը եւ առանց ծրարը պատուելու դրաւ սեղանին:

— Պատասխան, — հարցրեց պատանին:

— Ոչ

Եւ ճիշդ նոյն վճռականութիւնն ու կոպտութիւնը, որոնցով քիչ առաջ Արամը պատասխանել էր ինձ, այժմ անգամ էլ զգացւեցին նրա ձայնի մէջ: Ես զարմացայ եւ վայրկենապէս վառւեցի հետաքրքրութեամբ՝ դէպի նամակի բովանդակութիւնն ու նրա հեղինակը: Սպասեցի՝ մինչեւ որ տղան հեռացաւ: Ապա ասի.

— Տօ մարդ Աստուծոյ, ինչո՞ւ խեղճին այնպէս կոպտաբար՝ «ոչ» պատասխանեցիր... դեռ եւս նամակը չկարդացած: Գուցէ միջին լաւ բան են գրել: Առաջ, ասի, մի կարդայի՛ր...

— Գիտե՛մ, դիտե՛մ... առաջին անգամը չի... առանց կարճալու էլ գիտեմ... Չանձրալի է ու վրդովեցուցիչ... ան-

տանելի՛:

Իսկապէս, Արամը վրդոված էր, գրեթէ զոյրացած: Այդ խօսքերն ասելուց յետոյ՝ նայեց երեսիս. եւ երեւի իմ աչքերից հասկանալով, որ ես հեաքորքրած եմ խիստ...

աւելացրեց

— Ա՛ւ, ինքդ կարդա:

Ծրարն իսկոյն ձեռքեց եւ միշի նամակը հանելով՝ իմ կողմը ձգեց:

— Կարելի՞ է, — երկմտեցի ես:

— Ինքս եմ առաջարկում — նշանակում է կարելի է: Կարձա՛: Իսկ ինձ ներիր, գնամ՝ պակեմ մի կէս ժամ: Գլուխս է ցաւում:

Արամը սենեակն անցաւ՝ դուռը յետեւից ծածկելով: Ի կ'ես՝ զգոյշ ու յուշիկ, ասես գողունի, ինչ-որ մի մուտք, անորոշ ու անախորժ ետխաղագումով, բաց արի նամակը...

— «Ա՛ր... դու ինձ համար ստեղծել ես ուղղակի անտանելի հոգեկան վիճակ: Ես այլեւս դիտանալ չեմ կարողանում: Խորապէս վշտացած, բողոքում եմ քո վերաբերմանը դէմ: Չեմ պահանջում փոխադարձութիւն, ո՛չ: Սակայն իրաւունք եմ համարում պահանջելու քեզանից ամենահասարակ ընկերական վերաբերմանը: Ինչո՞ւ շարունակ ինձանից խուսափում ես: Օրական հագին մի անգամ քել հանդիպում եմ և չնայած այդ բնութեան՝ դու ինձ ուղղակի սառնութեամբ բարեւում ես... Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ...» Բեղանից պահանջում եմ բացատրութիւն: Ինչո՞ւ գոնէ երկու բառով չես պատասխանում իմ նամակներին: Իհարկէ որորմութիւն չեմ խնդրում. բայց և այնպէս պիտի հարցնեմ և դու ինձ պատասխանել պարտաւոր ես... որովհետեւ ես պատեն ջւում եմ: Գո՛ւ ես ինձ տանջողը: Գո՛ւ, դո՛ւ, դո՛ւ:

Սիրում եմ քեզ: Թէեւ վերջերս յաճախ ինձ թուում է, որ սէրս անհուն ատելութեան փոխել պատրաստ եմ:»

Ստորագրեալ էր — դէպքն ընթերցելի տառերով «Վիւբա», «Ղ.», յետ գրութեան, աւելցեալ՝ «Ներքի, Ար...», որ այս պէս յուղեալ եմ գրել: Ներքի: Ցտեսութիւն... յտեսութիւն...»

Արդալուն պէս, անդուստի հետաքրքրութիւնիցս մղուած՝ իսկոյն շտապեցի ներս, Արամի բով: Նամակի բովանդակութեանն իրազեկ դառնալուց յետոյ՝ ես ինքս ինձ իրաւունք տւի հարցնելու և հարցրի.

— Ո՞վ է այս... «Վիւբան»:

— Էն ուսանողուհին, որի հետ էսօր ինքդ ծանօթացել ես:

— Ի՞րանոյշը...

— Հա՛, Սիրանոյշը: Անունը թարգմանել է ուսուցիչն՝ «Վիւբա»: Էդպէս էլ յայտնի է՝ իր կուսա ցական ընկերների շրջանում:

— Կուսակցական:

— Հա՛: Բոլշևիկների:

— Նշանակում է, ինք էլ բոլշևիկ է:

— Հա՛:

Հետաքրքրութեանս բոցը, որ վառւել էր արագօրէն, հանգաւ: Կապուց և լեզուս: Եւ էլ խօսելու անկարող նորէն պատշգամբը ելայ:

Սակայն, թեւերս թուլացնողը Սիրանոյշ-Վիւբայի բոլշևիկութիւնը չէր: Անուելին: Ընդհակառակը, այդ հանգամանքը պիտի աւելի՝ եւս բորբոքէր իմ հետաքրքրութիւնը գէպի նա. որովհետեւ ինձ՝ կուսակցական կանայք, մանաւանդ երբ նրանք գեղեցիկ են եղած, միշտ էլ հետաքրքրել են առանձնապէս:

Ինձ վրայ ազդել էր այն պարագան, որ նամակի հեղինակը Սիրանոյշն էր. ազդել էր՝ այնքան խիստ ու խորը կերպով, որ ես մէկ վայրկեանում եւ խորհեցի եւ վճռեցի

ւանք: Վիւբան չերեւաց:

2-րդ օր յետոյ, Արամը վերադարձաւ Իջևանից:

— Հը՞:

— Ոչինչ, լաւ է — պատասխանեց նա, — առայժմ վրտանդի առաջն առնեց: Բայց տեսնե՞ք՝ վերջն ի՞նչ կը լինի... Գժբախտութիւնն էն է, որ Հանրապետութեան ներսում մեր ան իտան հայ բոլշևիկները նորից են սկսում գործել զօրքի ու գիւղացիութեան մէջ: Առանձնապէս մեր շրջանում՝ Իջևան. Գիւլիջան, Նոր-Բայազէդ:

Ուրիշ բաներ էլ պատմեց՝ բոլշևիկների ու Գաշնակցականների փոխադարձ պայքարի մասին: Խօսելու, արտայայտելու ներքին հարկադրանք էր գգացում նրա ձայնի մէջ: Վաղեց, ճանապարհի փոշուց մաքրեց, շորերը փոխեց, հաց կերաւ — եւ այդ ամենին զուգընթաց՝ շարունակ խօսեց ու խօսեց: Ես ձանձրացայ, ճիշդն ասած, եւ անուշադիր եղայ, սկսեցի ակամայեց ակնաջ դնել. շատ բառեր չէի՝ էլ լսում... Ա՛լ միայն սպասում էի՝ թէ՛ չէ՞ր հարցնի արդեօք Վիւբայի մասին:

Ես ուղղում էի, որ հարցնէր: Ուղղում էի մանաւանդ, րպէսզի նրա հարցնելուց յետոյ՝ ես էլ իմ պատասխանը տայի: Նա, անշուշտ, պիտի հարցնէր՝ հանդիպելիս եմ եղել արդեօք օրիորդին: Եւ պատասխանս լինելու էր կարճ ու կլտրուկ. — «Ո՛չ, չեմ հանդիպել եւ ո՛չ մի անգամ»:

... Արամն, իրօք, հարցրեց Վիւբայի մասին.

— Ո՞նց ես... Նրա հետ, երեւի, տեսնել ես յաճախ... Էն ուսանողուհին...

Պատասխանս պատրաստ էր, ի հարկէ. — «Ո՛չ, չեմ»... Բաց չգիտեմ ինչու, ես մի քիչ յապաշկեցի. եւ միւշդեռ վարանումս կանցնէր՝ Արամը քիփ մօտեցաւ ինձ ու ցածր ձայնով, իրան յատուկ ներշնչուն շեշտով՝ ասաց.

— Դու նրան բարեկամաբար խորհուրդ տուր՝ թո՛ղ

1393 - 2008

հեռանայ էստեղից... եւ առհասարակ մեր երկրի սահմաններէց: Հանգիստ չի մնում քո էդ Վիւրէն: Ես անցեալ օրը քեզ ստեղծեմ, թէ նա բոլորէիկ կուսակցութեան անդամէ... Ինչու թիֆլիզից գիտէի: Թեւեղերիցն էր: Բայց էստեղ, կարծում էի, թէ չի խառնուի գործերին: Ինքն էլ ասում էր՝ իբր եկել էր Գլիլիան, որ հանգստանայ: Բայց կնիքներ էր, բանից դուրս էկաւ: Մերոնք հաստատ փաստեր ունին, որ նա եկել է կուսակցական նպատակներով: Մեծ քանակութեամբ գրքերներ ու թերթեր տարածել է մեր շրջանների գիւղացիութեան մէջ: Կապ է պահպանում Իջևան, Գլիլիան, Նոր-Բայազէդ... Ուստի, դու խորհուրդ տուր իրան՝ թո՛ղ հեռանայ անյապաղ:

— Միթէ նրան կարող է վտանգ սպառնալ՝ եթէ մնայ հարցրի ես:

— Այո: Կձերբակալւի... Մինչև այժմ ես աշխատում էի չքմեղացնել նրան... պաշտպանել եմ... Թէև իրաւունք չունէի: Իսկ հիմա՝ այլևս չեմ կարողանայ: Զինւորների մէջ էլ սկսել է պրօպագանդ անել... Մերոնք անպատճառ կձերբակալեն: Միայն օրերի խնդիր է, գուցէ եւ ժամերի... Տեսնուի: Բայց թէ անունս չտաս: Խորհուրդը քո՛ կողմից լինի... որպէսզի հաւատալ: Թէև, գիտեմ, վախկոտ աղջիկ չի եւ մոլեռանդ է. այնուամենայնիւ... դէ ափսոս է էլի: Թո՛ղ ուրիշ ընդհանրութիւն: Տեսնալատճառ, զգուշացրու:

Ես մի վայրկեան ուղեցի առարկել թէ՛ «ախ ես նրան վաղուց է չեմ հանդիպում այլևս»: Մական խօսք դուրս չեկաւ բերանիցս: Շարեւ ու կանգնել էի լուռ Բրամի աստիճանները վրաս կաշկանդիչ տպաւորութիւն արին:

Հատ ուղեցի եւ շատ էլ աշխատեցի տեսնել Վիւրէնի հետ: Սակայն ի վեր: Այդ օրը մի հինգ-վեց անգամ անցայ նրա բնակած տան մտուով... Արեւն էր, ճարհատ

վճռեցի՝ ու բնակարանի բակը մտայ հէնց...

— Այստեղ է, կարծեմ, ապրում օրիորդ Սիրանոյշ... Վիւրէն, Պետրոգրադի ուսանողուհի... Կարելի՞ է անանել:

Հարցս ուղղեցի մի երիտասարդ կնոջ, որ ծծկեր մանուկը գրկին՝ կանգնել էր շէքի դռան քով: Նմանութիւն կար սրա եւ Վիւրէնի աչքերի ձեւի ու արտայայտութեան միջև: Հաւանօրէն քոյրն էր (յիշեցի՝ որ Արամն էր ստել, թէ Վիւրէն իւր քրոջ մօտն է ապրում):

— Տա՛ն է, — երկրորդ անգամ հարցրի ես՝ նկատելով, որ կինը լուռ կեցաւ առաջին հարցիս հանդէպ:

— Այստեղ չի... — դանդաղութեամբ, վարանելով, վերջապէս պատասխանեց կինը՝ կասկածոտ-կասկածոտ վրաս նայելով:

— Ես գործ ունիմ օրիորդի հետ, — ասի — ... անձնական գործ:

— Ոչ, այստեղ չի — կրկնեց կինը — ... չի բնակում... մի ան երկու օր հիւր էր եկել: Կարծեմ Վարաբէլիսա գէնաց... այո՛... բայց հաստատ չեմ իմանում:

— Գուցէ ձեր ծանօթներից որեւէ մէկը՝ նրա հասցեն...

— Չե՛մ իմանում... ոչինչ չեմ իմանում — խօսքս ընդհատեց կինը՝ այնպիսի խաւախուռն և միաժամանակ ձանձրացած շեշտով, որ ես այլևս աւելորդ ու անտեղի համարեցի ասելիքս շարունակել:

Թողի՝ դուրս եկայ ձեռնուռնայն: Վիւրային գտնելու յոյսս կորցրի: Տուն գալով, որոշեցի յայտնել Արամին, որ ինձ չէր յաջողել՝ նրա աւած յանձնարարութիւնը կատարել:

Բայց Արամը տանը չէր այդ ժամին (կէս օր դեռ չկար): Սպասելու կամք չէր մնացել մէջս, ուստի շուտ դուրս եկայ տնից՝ որպէսզի ժամ առաջ, րոպէ՛ առաջ գտնեմ Արամին: Գէպի Գաւառական Ինքնավարութեան շէնքը դիմեցի, բերանը — երթադրում էի — կհանդիպէի նրան հաւանաբար:

Անհամբեր ու անհանգիստ, ես լեցել էի ցաւոտ խղ-
ճահարութեամբ եւ ինչ-որ հրամայական պարտականու-
թեան գիտակցութեամբ՝ դէպի Վիւբան եւ նրա վտանգեալ
վիճակը...

Հասայ Ինքնավարութեան շէնքին: Մարդկանց մեծ բազ-
մութիւն էր այնտեղ՝ դռան առաջին, փողոցում: Իրարան-
ցում, յուզմունք՝ բաղմունքեան մէջ, որը ալեկոծւած էր
կարծես եւ բարձրաձայն խօսք ու զրոյց՝ խորնաշփոթ ա-
լիքների պէս ցրիւ տարածւում էր օդի մէջ...

— Նոր-Բայազէդից... չէ՛, Իջեւանից... չէ՛, չէ՛, Նոր-Բա-
յազէդից... ձերբակալւած բոլշևիկներ... ութ հոգի... չէ՛,
տասնեւհինգ... բսան... ո՛ւթ, ո՛ւթ հոգի...:

Առաջ անցնելու համար, ես ստիպւած պիտի լինէի հը-
րել, բոլթոթել մարդկանց: Վերադասեցի առայժմ սպասել
եւ կանգնեցի մի ծառի տակին:

Բաղմունքիւնն արագ աճում էր եւ յուզմունքը՝ սաստ-
կանում: Արածիքներ, սպառնալիք, հայհոյանք խառնեցին ի-
րար եւ նետւում էին բերնէ բերան՝ ալեհար տաշեղների պէս...

— Թո՛ղ գնդակահարեն բոլորին էլ... դաւաճաններ:

— Քրիկաներ... Հատացնում են մեր համբերութիւնը...
հերիք է:

Մի ուժեղ խռովք էլ իմ ներսում սկսեց: Մի սուր,
յամառ կասկած՝ սպրդել էր ուղղելիս մէջ:

— Եւ հինգ բապէ չանցած, իմացայ — նոյն այդ աղմուկի
ալիքների միջից, որ այո՛, Վիւբան էլ ձերբակալւած է...

— Ի՛նչ աղջիկը... էն որ էստեղ էր... միշտ ուսումնաւոր...
Ի՛նչ էլի՛ Վիւբան, Վիւբան...

Վշտացայ, ընկճեցի: Երկա՛ր մնացի՝ ծառի տակին
կանգնած... մինչեւ որ —

— “Հարկաւոր է — վճռեցի ես մէկէն — Երամի հետ մի-
ասին հարկաւոր է աշխատել ամէն կերպ եւ անյապաղ...
բաց թողնել Վիւբային”:

Տուն վերադարձայ եւ ծառայի ձեռքով աւարտ ինքի Ա-
րամիս այս երկողով:

“Քեզ սպասում եմ: Խիստ կարեւոր գործ: Խսեցն եկ”:

Անմիջապէս եկաւ: Ես յուզւած, յուսահատ ու դժգոհ
ոսի:

— Ինչո՞ւ հապա առաջո՛ւց չայայնեցիր ինձ... նախա-
զգուշացնէի խեղճ աղջկան, քանի դեռ այստեղ էր... ին-
չո՞ւ էիր ծածկում... Առաջ ասէիր, առաջ ժամանակի՛ն...

Երամը լուռ կեցաւ: Գէմքին մտատանջութիւն կար:
Ազգւած էր անշուշտ...

— Ուրեմն ի՛նչ — բացականչեցի ես անհամբեր, զայ-
րացած ձայնով: — Վիւբան կորչի՞ ուրիմն: Մի՞թէ՞ իսկապէս
ոչինչ անել չես կարող:

— Յոյս չունեմ... — պատասխանեց Երամը՝ խորհելով վա-
րանոտ: — բայց եւ այնպէս՝ կաշխատեմ:

— Ա՛յ, այո՛, անպատճա՛ռ — պնդեցի ես, եւ իսկոյն էլ
աւելացրի՝ նրան գրգռելու պարզ միտումով: — Ինչ աքած,
թէ նա ձեր կուսակցական հակառակորդն է... սակայն չէ՛
որ սիրում է քեզ անկեղծ կերպով: Մի՛ լինի ապերախտ
եւ... վրէժխնդիր:

Երեւի, վերջին խօսքս դուր չեկաւ Երամին: Ու ճի՛ղը
խոստովանած, ինքս յետոյ փոշմանեցի (անտեղի, գոեհիկ
բան էր ասածս): Թափանցող զուտ-յանդիմանական հայ-
եազքով նա մոիկ տւեց երեսիս, եւ ես լռեցի:

Միայն ցաւագին, աղերսալից փափաք մնաց հոգուս մէջ
աւերելիս մէջ, շրթունքներին վրայ... փափաք՝ որ փրկւի
փրկւի՝ Վիւբան: Եւ համոզւած էի խորապէս, որ միայն ու
միայն Երամը կարող էր փրկել...

Ու նա ի վերջոյ ասաց —

— Կանեմ, ի՛նչ հնարուոր կլինի:

Ասաց ու շտապ, վճռական քայլերով ելաւ դուրս:

Երկու օր պահելուց յետոյ, ձերբակալած բոլորները ներս գրելով փոխադրել էին Երեւան: Այն հոգի էին եղել, որոնց մէջ եւ, ի հարկէ, Վիւթան էր լինելու:

— Ոչինչ չկարողացաւ անել ուրեմն — վշտացած հարցրի Արամին, որից եւ իմացայ՝ փոխադրութեան կատարած փաստի մասին: — Երեւանում հօ՞ ձերոնք բոլորովին չեն խնայի նրան: Կորաւ խեղճ աղջիկը:

— Մի՛ վազդի, — ասաց Արամը խորհրդաւոր կերպով: — Հանդիստ կաց: Կարծում եմ, Վիւթային ոչինչ չի պատահի:

— Ախր չէ՞ որ Երեւանում...

— Մի՛ վազդի, ասի: Եւ լսիր... Ինչ որ էլ կասեմ՝ միայն դո՛ւ իմացած եղիր:

Արամը կանգ առաւ, մտածեց մի պահ, յետո՛յ շարունակեց —

— Չերբակալածներն ուղարկեցին Ղարաբաղի մարտի, որ այնտեղ երկաթուղի նստեն ու տարեն Ալեք օլ, Երեւան... Իսկ Վիւթան կանցնի հակառակ ուղղութեամբ՝ Թիֆլիզ... Ո՛չ մի խօսք եւ ո՛չ մի հարց այլեւս:

... Քիչ էր մնում՝ Արամի վրովն ընկնէի հրճանքից համբուրէի նրա խելօք սեւ աչքերը:

(Ա՛խ, Արամ, Արամ: Հիմա, երբ այլեւս կենդանի չես դու, անհուն կսկիծով եմ յիշում, քո այդ աչքերը եւ մեր այնօրայ յուշիկ խօսակցութիւնը):

Ուրախութիւնս մեծ էր, իսկապէս: Եւ այդ օրը, այդ ժամին միայն զգացի պարզօրէն, որ ես սիրել էի Վիւթային...

(Ա՛խ, Վիւթա, Վիւթա: Սիրել եմ ես քեզ՝ առաջին ազնիւ թարթից: Իմ խեղճ, խաթակն աղջիկ):

Օրեր անցան: Դատաւիչ ու տրտում օրեր... որովհետեւ այլեւս լուր չկար Վիւթայի մասին:

Դիլիջանը կորցրեց ամէն հրապարակական հետաքրքրութիւն: Ախր անհայտ էր եւ տեղ չէի գտնում ժամանակս անց-

կացնելու համար: Ընթերցանութեամբ իսկ զբաղելի չէր լինում: Ռատօնից էլ զղանքս էր գալիս՝ մանաւանդ երեկոները, երբ օրքեստրը գըլրի հա գըլրի՝ նւագում էր վախեր ու այլեւայլ ուրիշ եղանակներ, որոնք բոլորն էլ դարձել էին անկապ ու անբովանդակ ինձ համար:

Միակ տանելի մայրը՝ անտառն էր: Անտեղ, բնութեան ծոցում, կարողանում էի ցրիւ տալ ծանր մտքերս: Բայց հակառակի պէս, շուտով անձրեւներ սկսեցին, դեռիւ, ցեխ դարձաւ եւ ես հարկադրւած էի ասնը մնալ՝ մեր լայն ու դատարկ պատշգամբին:

Արամին սակաւ էի տեսնում: Մին՝ առաւօտները, մին էլ ճաշի պահերին: Ամբողջ մնացած ժամանակը նա դրսումն էր լինում:

Խօսում էիք, թէ եւ, իրար հետ. բայց բնաւ չէր տըրւում Վիւթայի առնելը: Եւ վճռել էի երբեք չինչ չհարցնել նրա մասին: Միայն սպասում էի լարած՝ անձկութեամբ, ու վշտով, թէ ե՛րբ վերջապէս Արամն ինքը կը տայ որեւէ տեղեկութիւն:

Սպասեցի այդ անորոշութեան մէջ մի ամբողջ շաբաթ օրն ինձ, սակայն, մի ամիս թւաց: Համբերութիւնս հատնելու մօտ էր: Յարաճուն մի կարօտ, իմ սիրած աղջկայ վիճակն ու տեղն իմանալու փափաքը, որ այն միջոցին տենչաւքներ ի մեծագոյնն էր դարձել ինձ համար, — արում, քանդումը էր ամէն համբերութիւն:

Պատշգամբը, պարտէզը, փողոցը, նոյնիսկ անտառ, երկինքը, օդը՝ ամէն ինչ, ի վերջոյ, սկսեց հաւարաստապէս վատ աղբել վրաս: Ուստի, ապարդիւն սպասումիս երկրորդ շաբաթուայ հէնց սկզբին՝ կ'ընկաւրուէի վճռեցի հեռանալ Գիւլիջանից:

— Գնում եմ, — ասի Արամին, — ժամանակն է: Առաւօտըն եմ ճանապարհում:

— Ինչո՞ւ այդպէս անողորմելի, յանդարձ:

— Չանձրացել եմ:

— Թիֆլիզ կվերադառնաս:

— Դեռ եւս եգոց՝ կառքով կերթամ՝ Ղարաքիլիսա՝ Միւրիւն օր կմնամ էնտեղ, մեր Հմայսիեց մօտ: Իսկ յետոյ... դեռ չեմ որոշել:

Արամն, ի հարկէ, հեշտութեամբ գլխի ընկաւ՝ թէ ի՞նչ էր Ղարաքիլիսա մնալու նպատակը... (Այո, ես այնտեղ փնտռուէր պիտի կատարէի Վիւսյին մասին): Եւ շիտ-շիտակ՝ նայելով աչքերիս՝ ժպտաց մտադբադ: Մտերմական ու խորհրդաւոր էր ժպիտը:

Նայեց. եւ ապա հայեացքը տնկեց ձեռքի ծխախոտի ծխին, որ փութկոտ գալարներով վեր էր բարձրանում:

— Լաւ - ասաց բաւական յետոյ - եթէ չես ուղում՝ մի՛ կենա այստեղ:

Ճաշի ժամանակն էր: Գուրս գնացի որ կառք վարձեմ՝ առաւօտը վաղ ճանապարհւելու համար: Ղարաքիլի կանխավ ճարը տւի: Զեռոյ գնացի, թախառեցի Ղարաքիլիսայի խճուղին ի վայր՝ դէպի մօլոկանների արւարձանը և աւելի հէտու:

Վերադարձայ ուշ՝ բողբոլին միթեա՞ծ պահուն, երբ անամպ երկնքին՝ աստղերը վառել էին իրանց ողջ փայլով:

Արամը դեռ տանը չէր: Անշուշտ ժողովի էր գնացել:

Վերջին իրիկունն էր, որ պիտի անցկացնէի նրա հետ: Պատշգամբին մենակ նստած, նրա՛ մասին էի մտածում շարունակ: Անշուշտ սիրում էի նրան: Զգացի, սակայն, որ սյգ-միջոցին՝ սէրս համակած էր վշտով: Մի վատ նախադասում բերել՝ այդ վիշտը գցել էր հոգուս մէջ: Լիւբան արգէն կորած կործանւած էր թւում ինձ: Արամն էլ՝ մահ-ւան անգիտի եղբի կանգնած: Ուսկից ծագեց այդ տրիւրաւի իմ նախադրացումը — չէի՛ իմանում: Միայն թէ, նա ծանր էր գալիս իմ սրտին, շունչս էր սեղմում...

Եւ երեխայի պէս անկաշկանդ՝ ուրախացաւ, երբ վերադ

վերադառնալու երեաց:

Այս - գիշերին մօտ էր արդէն: Պիտի ընթերէնք: Արամը գիտի էր բերել տեւել կանխապէս: Երեց բաժանները...

— Կենացդ...

... Եւ կենացը - ծիծաղեցի եւ և մենք բաժանները շրկացրինք իրար:

— Քեզ բարի ճանապարհ — աւելացրեց Արամը՝ բաժակը ձեռքին դեռ պահած. և ժպտաց (ճիշտ այն ժպտիւր, որ ես տեսել էի ճաշի միջոցին):

Բաժակը դատարկելով, կրկին ուղիւ աչքերիս նայեց ու նորից ժպտաց:

— Գիտես ինչ... հարցրեց շարունակ երեսիս մտիկ տալով:

— Ի՞նչ:

— Ես կարծում եմ՝ կարիք չկայ, որ մնաս Ղարաքիլիսայում: Որոշել ես Թիֆլիս վերադառնալ, դէ՛ ուրեմն ուղղակի անցիր էնտեղ:

— Հտապեցնում ես: Ի՞նչ կայ որ:

Առանձին ոչինչ... միայն թէ ենթադրում եմ, որ Թիֆլիսում... կը հանդիպես...

— Լիւբայի՞ն... բացականչեցի ես՝ իսկոյն հասկանալով բանի եռութիւնը:

Այո - հանդարտ պատասխանեց Արամը եւ շիշը ձեռքին առաւ՝ որ բաժակս լցնի նորէն: Զամենայն դէպս, նա կարողացել է անցնել մեր սահմանից այն կողմը՝ դէպի Թիֆլիզ: Բւտի, կարծում եմ՝ որ հիմա էնտեղ կը լինի:

... «Լիւբան՝ աղա՛տ, Լիւբան՝ աղա՛տ»... — անվերջ ու անվերջ արձագանգեց հոգուս մէջ ալեկոծ մի հրճանք: Գրկեցի Արամին ու սկսեցի համբուրել: Երախտագիտութիւն, ջերմ յոյզեր ու գորով՝ առատօքէն ու յախուռն փռում էի Արամի ճակատին, ալիքներին, շուրթերին:

... Գիշերը կէս-ժամ իսկ չքնեցի: Կարծես ներարգան եղած, անհանգիստ էի ու անհամբեր՝ թէ ե՛րբ պիտի լուսա-

նոր :

Ո՛ր դեռ լոյսը կարգին չբացած, ելայ՝ իմ կառապանին շտապեցնում, որ պայմանադրեա՞ծ ժամից շուտ ձանապարհ ընկնենք: Ժամերն ու ըրպէներն անգամ կարեւոր չափեր ու նշանակութիւն ստացան իմ աչքում... Ընտ հասնէի Թիֆլիս: Ի՛նչքա իմ սեփական աչքերով տեսնէի Ղիւբային՝ կենդանի, սե ու սիրուն աչքերը բաց:

Արամը հետս եկաւ մինչև կառքի կեցած տեղը: Ջերմ ու պիտի գրկախառնեցինք...

— Դէ բարով հասնես, — ասաց՝ վերջին անգամ ձեռքս սղմելով ապա աւելացրեց՝ գրեթէ գաղտուկ. — Ասա՛ իրան՝ լժով այլևս չգոյ չսլաւտան:

Թիֆլիզ հէնց որ հասայ, գնացի՝ Բօրիսին գտայ: Սրա անունը յիշատակել եմ արդէն: Սա՛ էր՝ որի հետ ես առաջին անգամ տեսած էի Ղիւբային:

Բօրիսը բոլշևիկ էր. ես այդ լաւ գիտէի: Թիֆլիզում իմ Գիլիջան գալուս նախօրեակին, նրան ձերբակալել էին հակահառափաչական պրօպագանդի համար: Բայց երկու օր պահելուց յետոյ բաց էին թողել, որովհետև բոլշևիկեան միսսիայի ազդու միջնորդութիւն էր եղել նրա օգտին: Ռուս էր՝ միամիտ, ընկերասէր, բարեսիրտ. բայց և կամուկոր, հաստատակամ և բծախնդիր: Գպրոցում միևնոյն դասարանում, մենք մնացինք միասին հինգ տարի շարունակ: Ապա իրարից բաժնեցինք թէև — (նա գնաց Խարկով, իսկ ես անցայ Պետրօկրատ) — այնուամենայնիւ մենք մնացինք առաջւայ պէս մտերիմ ընկերներ: Նրա բնաւորութիւնը որ լիովին արտայայտւել էր դեռ գպրոցական շրջանում և որը ես սիրել էի, նշնութեամբ պահպանեց նաև յետագայ տարիներում:

Շնորհալի տղայ էր, առանձնապէս՝ հոետորական ձիրքով օժտւած: Գաղափարի մարդ՝ հաստատ հաւատքով ու

համոզմունքով էր մտել կոմմունիստական կուսակցութեան մէջ: Մեր Արամի հմայքը չուներ, անշուշտ. ո՛չ է: Նրա անձնէր անցեալն ու յեղափոխական շունչը: Բայց նա՛ էլ էր ինձ անկեղծ յարգանք ու հիացմունք ներառողում:

Ինչևիցէ, անհրաժեշտ դատեցի՝ նախ և առաջ Բօրիսին հանդիպել: Անկասկած, նա կիմանար՝ թէ Ղիւբան իրօք հասել էր Թիֆլիզ:

Հեշտութեամբ գտայ ընկերոջս՝ «Ծվէնո» կաֆէուէ, որի մշտական յաճախորդն էր ինքը:

— Ա՛, գնչուսող բարի, — ուրախացած բացականչեց Բօրիսը համբուրեց հետս և իօկոյն՝ բովնտի կեցած լուպասարկու օրիորդին պատւիրեց սուրճ. բերել ինձ համար:

Հետը մի ուրիշ մարդ կար: Ծանօթացանք. բայց ես այնքան էի շտապում, որ տարրական քաղաքավարութիւնը զանց առնելով, ասի Բօրիսին թէ՛ իր հետ առանձին խօսելիք ունիմ: Անհամբերութիւնս աճում էր ըսպէս առ ըսպէս:

— Հէնց հիմա՝ — հարցրեց:

— Այո... կարեւոր է... եւ եթէ կարող ես՝ գնանք դուրս, — Խո սուրճ չեմ ուզում: Ի զուր պատւիրեցիր:

Գուրս եկանք:

— Ի՛նչ է պատահել, անհանգիստ ես:

— Ոչինչ... այնպէս... — պատասխանեցի ես մտադրաւ խօսքս որտեղից եւ ինչպէս սկսելու հոգսով տարած:

Բօրիսը լաւ տրամադրութեան մէջ էր: (Առհասարակ էլ — զւարթ, կենսուրախ անձնաւորութիւն): Մտերմական խնթութեամբ՝ անոցների տակից նայեց երեսիս ու շուտով սպասեց թէ ի՛նչ պիտի ասեմ: Մենք քայլում էինք բանուկ փողոցի լայն մայթով: Ժամանակ անցաւ...

Որոշեցին՝ հեռուից սկսել... բայց փոխարէնը՝ յանկարծ, առանց այլևայլի, հարցրի.

— Դու օրիորդ Միւսին ճանաչում ես: Որտեղ է նա հիմա: Անշուշտ, իմանում ես:

Բօրիսը կանգ առաւ և ակնոյնների ուղիղ միջից մտնել տւեց ինձ՝ հարցական, գնեող աչքերով: Հէշտոցը կտրեց. դարձութիւնը վայրկեանպէս չքացաւ երեսից: Ինձ հասար միանգամայն արագասելի ու անցանկալի լըջութեամբ, համարեա թէ խտորէն՝ ասաւ.

— Ճանաչում եմ, այո՛: Սակայն ինչ կայ, որ այդպէս հետաքրքրւում ես թէ որտեղ է նա: Այստեղ է, Թիֆլիզում: Ողջ-առողջ:

— Հաստատ:

— Այո: Ուրիշ:

— Ոչինչ ալէս: Միայն այդքանն էի ու լում իմանալ չորհրդակց եմ: Ճիշտն ասած, չէի հաւատում:

(Ասի ու խնդացի՝ ականայից ու մանկական փութկոտութեամբ: Բօրիսը, սակայն, շարունակեց նայել ինձ՝ միևնոյն լըջութեամբ. և այդ բանը վատ ազդեց ինձ վրայ: Կարծեցի, որ նա լրտեսական գէշ միտումներ է ինձ վերադրում: Ուստի և, վիրաւորւած՝ նկատեցի.

— Դու, երեւի, յետին նպատակներ ես ուղղում գտնել իմ հետաքրքրութեան մէջ...

— Քա՛ւ լիցի — անմիջապէս վրայ բերաւ Բօրիսը և նրա ձայնի շեշտից նոր միայն հասկացայ, որ կասկած երթադրութիւնս անհիմն է բոլորովին:

— Ար այդպէս է՝ ուրեմն թուր ինձ հասցէն: Ես նրան ուզում եմ անձամբ տեսնել — ասի ես վճռականօրէն, սիրտ առած:

— Խնդրե՛մ: Միւսին ապրում է Նախալովկայում... (Եւ ասաց փողոցի անունն ու բնակարանի համարը): Ցաւարիշ չիւրեան մանրամասն պատմել է մեզ իր ձերբակալութեան մասին՝ Գիլիջանում: Գիտեմ, գիտեմ բոլորը: Ես քո մասին հարցրել եմ, քանի որ իմանում էի թէ Գիլիջանումն ես. ինչ

Քըդ էիր ինձ ասել: Քեզ հետ ծանօթ էր եղած...

— Այո, պատահել ենք... մէկ — երկու անգամ...

Կահաղեցի, կարծես և զգացի, որ անծածկելի մի կարմրութիւն էր տարածւում երեսիս... Արդեօք ի՞նչ էր Միւսին պատմել իմ մասին: Նաև, պատմած կլինի՞ր արդեօք Արամի մասին: Հարցնեմ, չհարցնեմ...

— Ե՛կ — ասաւ յանկարծ Բօրիսը — ե՛կ, կուգես, միասին գնանք մօտը: Ես այժմ աղատ եմ՝ երկու ժամի չափ: Տրամ վայ նստելը, գնա՛ք: Հայդէ, շուշանք:

Թեւ մտնելով, ըստ իր վաղեմի սովորութեան, — քալելուն արագացրեց և ինձ քարշ տւեց գէպի տրամվայի վագոնների հերթական կայանը: Նորից նախկին դարձութիւնը, որ անյայտացել էր լըջութեան քողի տակ, երևաց՝ պարզեց նրա դէմքին: Սկսեց խօսել՝ այնքան շատ, որ ես ձանձրացայ... ու իմ սեփական մտքերի յետևիցն ընկայ:

«Ճառ կղարմանայ, երեւի, ինձ որ տեսնի», — դուստը հեւքով ասի ինքս ինձ՝ Միւսինի մասին խորհելով: Իջանք թըրամվայից և ոտքով շարունակեցինք գնալ: Թուաց ինձ, որ Բօրիսին շատ հաճելի էր երթալ Միւսինի մօտ: Յամենայն դէպս, նկատելի կերպով՝ յաճախ էր անունը տալիս:

Միայնակ, ցածրիկ ու պտղիկ տան առաջ՝ Բօրիսը կանգ առաւ ու պատուհանը ծեծեց՝ պայմանական մի ձևով (այդպէս թուաց ինձ):

Այդ, երբ դուռը բացւեց ու մենք մտանք ներս... տարօրինակ փոփոխութիւն կատարեց տրամադրութեանս մէջ՝ մէկ — երկու վայրկեանի ընթացքում՝ մտածս սենեակի շուրջից անդին՝ հէնց որ տեսայ Միւսինին:

— Բարե՛, տաւարիշ չիւրեա — դարձրէն ողջունեց Բօրիսը — ահա՛՝ հիւր եմ բերել ձեզ... Հա յաստանից:

Ես խօսք ասել չկարողացայ, միայն գլուխ տւի մի քանի անգամ՝ դրան շնորհից... և ժպտում էի: Միւսին ընդառաջելով, մեկնեց ձեռքը բարեկամական ջերմութեամբ:

— Բարեւ, բարեւ: Ինչպէ՞ս էք: Դիլիջանից... Նտեք՝
նտեք: Ահա այստեղ: Հատ ուրախ եմ, շատ ուրախ: Ե՛րբ
եկաք:

Չայնը, խօսքերը, շարժումները, աչքերը՝ սիրալիր էին,
լոկկերական, հաճելի: Սակայն ես՝ շարունակում էի կենալ
անխօս... վասնզի ուշք - միտքս ամբողջովին դարձած էր
դէպի այն անակնկալ փոփոխութիւնը, որ կատարւեց իմ մէջ:

Ի՞նչքան կարօտ, յոյզ ու տենչանք քաշելուց յետոյ՝ այժմ
տարակուսած, գրեթէ անտարբեր, անյոյզ նայեցի Վիւ-
բային... և հիասթափութիւն զգացի:

Գանի, ուրեմն, հեռու էի նրանից, մանաւանդ երբ նա
փառնաբանութիւններ անում էի նրան: Սակայն հի-
մա, երբ վերացել էին այդ երկու հանգամանքները, — շո-
գիացաւ, անցաւ նաև իմ սէրը... (իրա՞ն այդպէս էր ար-
դեօք):

... Մի բառորդ ժամի չափ միայն մնացի մօտը. և այդ
ընթացքում՝ աւելի շատ լուեցինք, քան թէ խօսեցինք: Բո-
րիսն էլ էր լուռ, մի անկիւն քաշւելով՝ հէնց սկզբից՝ գրը-
քներ էր թերթում անընդհատ: Դարձաւ անհամբեր, անհան-
գիստ: Նկատեցի, որ քանիցս մօտիկ տւեց Վիւբային՝ սեւե-
ռուն, բայց և մտադրաւ հայեացքով, որի մէջ սովորական
զարթութեան փոխարէն ինչ-որ տխրութիւն էր արտա-
ցում:

Վիւբան հարցրեց Դիլիջանի եղանակների մասին, ոտոն-
դի մասին... Ես էլ ասի, թէ շատ էի զարմացել, որ ինքն
այնպէս յանկարծ չքացաւ Դիլիջանից:

— Բանից դուրս եկաւ, որ ուղիղ թիֆլիզ էք անցել,
— աւելացրի ես՝ նրա ձերբակալութեան պարագային ան-
տեղեակ ձևանալով:

— Այո, — պատասխանեց, և այնքան զուսպ ու հանգիստ,
որ մտքումս ասի հեգնօրէն. — «Ծածկւել եմ իմանում վար-
պետ աղջիկ»:

... Հրաժեշտ տւի, դուրս եկաւ: Բօրիսը մնաց, ասելով
թէ ինքը գեռ խօսելիք ունի մի բիւ:

Փողոց երբ ելայ, զգացի իբր ինձ մի ուրիշ կողմից
յանձնարարած էր եղել երթալ Վիւբայի մօտ, բարեկեր
յայտնել սոսկ ու յետ դառնալ... և ահա ասիկ՝ վերագառ-
նում եմ՝ պարզ յանձնարարութիւնը կատարած, դերս վեր-
ջացրած: Հանգիստ էի այդ միջոցին: Այն խոռվիքն ու տա-
ռապանքը, որ կրել էի մէջս մօտ երկու շաբաթ, անհետա-
ցել էին: Ամէնը տարայ, ուրեմն, ձգեցի այնտեղ՝ օրիորդ
Վիւբայի սենեակում:

«Կնշանակի, իմ սէրը խախտւո՞ւ էր եղել: Ժամանա-
կաւոր օգեւորութիւն... Թուլացա՞ւ, անցա՞ւ...» — այսպէս
խորհեցի:

... Արդարեւ, այդ օրից յետոյ՝ անդորրութիւն տիրեց
հոգուս: Սուսփուսիկ ու լրջութեամբ սկսեցի պարապել իմ
գործով: Չնայած քաղաքը պատող ծանր տօթիւն, որից մար-
դու շունչն էր կտրուում, ես աշխատում էի ժամեր անդա-
դար: Յերեկները դուրս չէի գալիս համարեա, իսկ երեկո-
ներին մենակ ելնում էի զբօսանքի՝ դէպի Կօլօրի խճուղին
կամ Մուշտայի դի պարտէզը: Եւ դո՛հ էի, ինձ լաւ էի
զգում:

Սակաւ պահերին էր միտս գալիս օրիորդը... (այո, էլ
նոյնիսկ «Վիւբա» չէի ասում մտքումս, այլ միայն «օրիորդ»):
Նա չալիս էր ու գնում՝ յիշողութիւններին ու հետաքրք-
րութեանս սահմաններում առանց երկար մնալու:

Բօրիսին ևս չէի հանդիպում: Ու, չգիտեմ ինչու, ին-
քըս իմ մէջ՝ դժգոհ էի նրանից:

Ամառն անցաւ, սեպտեմբերը սկսեց:

Մի օր Վերայի կամուրջին անցնելիս, տեսայ օրիորդին.
Իրար դէմ — դիմաց ելանք, բարեկերիք ու երկուքս էլ միա-
ժամանակ՝ կանգ առանք, ձեռք տւինք միմեանց:

Հարցրեց աշխուժով :

— Որտեղ էք, չէք երեւում ամենեւին :

— Զբաղւած եմ, օրիորդ :

— Այդքան չափազանց ... 0' ... ուրեմն, առանձին նորութիւններ չունէ՞ք : Ի՞նչ լուրեր՝ մեր գեղեցիկ Գիլիլճայից : Անշուշտ, նամակագրութիւն ունէ՞ք ձեր ազգականի հետ :

Ես—անուշադիր՝ աչքս գետի ընթացքին գցած—սկզբում չհասկացայ, թէ ի՞նչ ազգականիս էր վերաբերում նրա խօսքը : Եւ անուշադիրութիւնիցս, երեւի, առնա՞ծ (գուցէ և ուրիշ պատճառով, չգիտցայ) —

— Յետեւութիւն, ջտեսութիւն, — ասաց փութով ու հեռացանք իրարից :

Այդ միեւնոյն օրը, դրանից մօտ երկու ժամ յետոյ՝ կրկին հանդիպեցինք միմեանց՝ տրամվայի վագոնում...

— Մեզ երկուսիս ի՞նչ է այսօր պատահել, որ շարունակ զարկւում ենք իրար, — խօսեց նա զւարթ-զւարթ, զուսպ ծիծաղով, — եւ յոյս ունե՞մ՝ երեքը կըրացնենք, այսօր հէնց... Զէ՞ք գայ՝ երեկոյեան շատ հետաքրքրական դասախօսութիւն կայ, Կոնստանդնուպոլսի գահի՞նքում : Եկէ՞ք :

— Կը գամ... Թերեւս, — համաձայնեցի ես՝ աննշան վարանումից յետոյ :

Եւ իրօք գնացի այդ երեկոյ՝ օրիորդի ասաց դասախօսութիւնը լսելու :

Ներսէս դասախօսութեան սրահը շրջապատող միջանցիները լիքն էին սուար բաղմութեամբ : Օրիորդը, սրահի դռանը կանգնած, տոմարներն էր ստուգում : Անմիջապէս նկատեց ու գլխով արեց ինձ՝ լուռ, բայց շատ սիրալիր :

Գեռ շուտ էր, չմտայ սրահը, այլ միջանցիներից մէկի խորքն անցայ, որ հեռու կենամ մարդկանց ժխորից :

Բօրիսը ցցւեց առաջիս : Գոհունակ, ուրախ :

— Ա՛յ, գալդ բարի :

Թեւս մտաւ ու շրջւելով՝ քայլեց հետս, իմ բռնած ուղղութեամբ :

— Նո՛ւ, ո՛նց է քե՛թդ, — հարցրեց՝ ակնոցի տակից մտերմաբար նայելով :

— Վաւ եմ, — պատասխանեցի՝ նրա գոհութիւնից վարակելու տրամադրութեամբ :

— Վա՛ւ կաց, լա՛ւ... ամէնքն էլ շուտով լաւ կ'լինեն :

— Ինչպէ՞ս :

— Այնպէս էլի՛... — ու աչքով արեց՝ բանգէտի չարածձիւթեամբ. — շուտով կտեսնես եւ կ'համոզւես :

Հասկացայ, թէ ի՞նչ էր Բօրիսի ակնարկը : Յաճախ, դրեթէ ամէն անգամ՝ հետս զրուցած միջոցներին, Բօրիսը ամենայն հաստատակամութեամբ կասէր — այս ու այն առիթով — թէ բոլշևիկները շատ շուտով կ'յաղթանակի որջ Կովկասում եւ կ'բերի կովկասեան բոլոր ժողովուրդների համար բարիքներ ու երջանկութիւն...

Այս անգամ սակայն, նա ժամանակ չունէր՝ այդ բարիքներից խօսելու : Հտապում էր ու թեւս ձգեց՝ գնաց :

— Առա՛յժմ : Դադարի ժամանակ ինքս քեզ կ'գտնեմ... գործ ունեմ հետդ :

Ի վերջոյ, զանգն էլ տւինս սրահը մտայ : Դասախօսը, մի հրեայ պարոն, ընդունեց բուռն ծափահարութիւններով, որոնք բաւական երկար տեւեցին : Յոյցի պէս բան եղաւ : Խռանդաբին ծափ զարնողներից միւր Բօրիսն էր : Ինթադրեցի, որ բոլշևիկներն էին դասախօսութիւնը կազմակերպել : Նիւթն էր՝ « Համաշխարհային պատերազմի պատճառներն ու հետեւանքները » :

Դասախօսութեան վերջումն էլ ծափահարութիւնները կրկնեցին՝ աւելի բուռն թափով : Ունկնդիրների մեծ մասն արդէն դուրս էր եկել սրահից. իսկ մնացողները՝ սեղմ ու ջերմ շրջապատեցին դասախօսին : Բացակակութիւններ, հրճանք ծէծալ...

Այնտեղ էին եւ Բօրիսն ու Վիւբան՝ իրար քով կանգնած, համարեա սովաւած :

Գանդաշաքայլ դուրս եկալ սրահից եւ անհրաժեշտան մէջ՝ կեցոյ միջանցքում : Ուղեցի սպասեմ, որ նրանք էլ դուրս գան...

Դուրս եկան վերջապէս : Բօրիսը՝ օրիորդի հետ նեղմամբ մտնորէն թեւանցուկ...

— Հը, հաւանեց՞ր հօ :

— Չերոնցից է — հարցրի ես :

— Ի հարկէ, — պատասխանեց Բօրիսը : Նա արդէն իմ թեւն էլ էր մտել իր միւս ձեռքով եւ մեղ երկուստի (օրիորդին ու ինձ) քարշ էր տալիս՝ գէպի գրսի դուռը : — Այո՛ մերոնցից, մերոնցից... Բայց քողարկւած, ուրիշ սօուսի տակ երկաթ չի տեղի այսպէս : Երկու, ամենաշատը երեք ամիս եւս՝ ու այստեղ էլ, ամէն տեղ էլ մեկը կ'լինենք ասպարէզի տէր — տիրականը : Շատ չենք սպասեցնի : Շուտով, շուտով, սիրելիս, ե՛ւ Վրաստան, ե՛ւ Հայաստան՝ մերը կը դառնան :

Մտքումս բարբաջանք համարեցի այդ ամէնը, որովհետեւ այդ միջոցին տրամադրութիւնս վատացել էր. դժգոհ էի ու սրտնեղած՝ ե՛ւ Բօրիսից, ե՛ւ օրիորդից : Կուզեայի աղաւել, ցատկութիւն ասել ու հեռանալ...

Վիւբան խնդում էր, տրամադրութեան լաւութիւնից, Ի հարկէ : Եւ խնդարով ասաց, երբ Բօրիսը կրկին ոգեւորւեց իրանց գաւիք յաղթութիւններով :

— Շատ մի՛ ոգեւորէք, տաւարիչ Բօրիս : Մեր բարեկամը կարող է նեղա՛լ :

Խօսքն ինձ էր վերաբերում, որովհետեւ այդ ասելիս Վիւբան, թեքւելով, գէպի ինձ նայեց... Ծիծաղկոտ, անուշ էին աչքերը : Բայց ես մէկէն կանգ առայ...

— Ինչու պիտի նեղանամ : Չեղ լաւ յայտնի է, որ ես չեմ

պատկանում ոչ մի կուսակցութեան... Եւ ինձ համար բոլորովին միեւնոյնն է...

— Այո՛... բայց թէ՛ ձեր հօրեղբորորդին :

Բօրիսն էլ որպէսզի բաց չընկնի թեւեցս, կանգ առաւ և օրիորդին էլ պահեց քովը միասին : Երեքս իրար դէմ-յանդիման ելանք, շատ մօտ : Առնւած ու արդէն զայրանալ սկսած՝ ուղիղ նայեցի Վիւբայի աչքերին ու ասի, խիստ ու կոշտ ձայնով —

— Հօրեղբորորդիս : Ի՞նչ կապ :

— Նրա աղբեցութիւնը ձեզ վրայ՝ շատ մեծ է : Կամենում եմ ասել, որ դուք պաշտելու չափ սիրում էք նրան :

— Ո՞վ ո՞վ, ո՞վ է այդ պաշտամունքի առարկան, — հետաքրքրւած մէջ ընկաւ Բօրիսը :

— Մի գաղնեկցական... Գաւառական լիդերներից — պատասխանեց Վիւբան եւ ուղում էր խօսքը շարունակել : Բայց ես ընդհատեցի նրան՝ պոռթկալով.

— Հեգնում էք՝ «գաւառական լիդեր» : Սակայն՝ մի՛ մոռանաք, որ եթէ դուք այստեղ էք հիմա եւ աղատ... շնորհակալ պիտի լինէք միայն եւ միայն Արամից : Չեղ փրկողը նա էր : Միթէ չէք հետաքրքրուել թէ ինչպէ՛ս եղաւ, որ ձեւ յաջողեց Գարաբախիսայից այս կողմը փախել :

Խօսում էի յուզւած ու արագ-արագ, եւ ո՛չ Վիւբան, ո՛չ Բօրիսը շարժում իսկ չարին՝ ինձ ընդհատելու : Գեռ շատ խօսքեր պիտի ասէի Վիւբային... պատժելու համար նրա ասկերաթութիւնը՝ Արամի հանդէպ : Բայց լռեցի :

Նրանք, կործնւմ իրար երես նայեցին : Առաջացած լրագրութեան մէջ նրանց բովին մնալս բռնադրօսիկ բան կը լինէր, որովհետեւ զգում էի՝ որ այն միջոցին դէմքս մոայլէր, անհամբոյր : Բօրիսն էլ արդէն թեւս բաց էր ձգել...

Ներողութիւն խնդրելով՝ թողի, հեռացալ :

Գրա յաջորդ օրը Բօրիսն եկաւ մօտս՝ իմ բնակարանը՝
Պալատ, այդպիսի բան չէր արել նա։ Ես գետ չէի թիւած
ևս նախորդ իրիկեայ դէպքից։ ու, հաւանօրէն, այդ պատ-
ճառով՝ գիմաւորեցի Բօրիսն սառնութեամբ։

— Բարե՛ւ,—ասաց ու նստեց՝ առանց սպասելու իմ
հրաւերին։

Արիւ խօսք այլ և չաւելցնելով ողջոյնի իր կարծբառին՝
լուռ մնաց բաւական ժամանակ։ Ծխում էր։ Նա միայն
մտալքաւ, անհանգիստ պահերին ծխել գիտէր։

Ես էլ ձայն չհանեցի, սպասելով՝ որ առաջինն ինքը խօ-
սի։

... — Եկել եմ մօտդ, սկսեց նա դանդաղ ու անփոյթ
(պարզ էր, ի հարկէ, որ անփութութիւնը շին ու էր)։ — Եր-
բու բան իմանալու նպատակով։ Երկու հարց պիտի տամ։
Աւել ինդրէի որ պատասխանես անկեղծութեամբ։ Խօսք
տալիս ես։

— Ստելու սիւնորութիւն չունիմ, պատասխանեցի անմի-
ջապէս ու վստահօրէն աւելացրի, — մանաւանդ որ գիտեմ թէ
ինչ ես ցանկանում ինձանից իմանալ... Ա, ո, ձեր տաւա-
րիչ Վիւբան, երեւի, հիմա՝ կլինէր բանտում, գուցէ և ա-
ւելի վատ, եթէ Արամը, իմ հօրեղբորդին, չփրկէր նրան։

— Արամ։ Արամ Սարգսեան...

— Այո, նա ինքը։

Բօրիսի դէմքով որ արդէն զւարթ չէր, մի սուեր ան-
ցաւ, ասես։ Յամենայն դէպս, իմ արած յայտնութիւնը նը-
կատելիօրէն գէշ ազդեց նրա վրայ... Եւ նա մի նոր սիգա-
րէթ վառեց։

Ես սկսեցի պատմել, թէ ինչպէս Վիւբային ձերբակա-
լելը բերել էին Գիլիլման եւ թէ ինչպէս Արամը ջերմ կեր-
պով աշխատեց, որ նա ազատւի։

Բօրիսը լուռ էր՝ անընդհատ ծխելով։ Ապա ասաւ.

— Ես լսել էի ձեր այդ Արամ արգսեանի մասին... ո՛չ

տալոյն Վիւբայից, այլ ուրիշներից։ Ինչեւէնէ։ Ի հարկէ, դը-
նահատելի է նրա վարմունքը... այո, ի հարկէ... այո՛։
Իւ ես գլխաւորաբար դրա համար եկայ քեզ մօտ... այո՛։
Պարեմն կնշանակի, Արամը... այդքան մօտ ես եղել նա եւ
ստաւորիչ Վիւբա։

— Զգիտեմ։

Բաւարարեց արդեօք իմ այս կարծ պատասխանից թէ
ոչ չհասկացայ։ Միայն թէ, շարունակեց Բօրիսը.

— Այսպէս կամ այնպէս, մեր ընկերները, անշուշտ,
նշատի կառնեն այդ հանգամանքը, այսինքն որ դաշնակ
Արամ Սարգսեանը, որոշ չափով պաշտպանել է մեր ընկե-
րոջ։ Հայաստանը երբ կենթարկւի սովետիզացիայի... այն
ժամանակ...

— Պարեմն գուր, ընդմիջեցի ես նրան, — առանց ա-
տակի՝ այդքան հաստատ համոզւած ես, որ ձերոնք կյադ-
թեն շայտատանում։

— Բողոքովի՛ն հաստատ։ Հայաստանի՝ սովետիզացիան մի
շատ կարծ ժամանակի խնդիր է։ Ուստի եւ, ես շատ կու-
ղենայի, որ քո դաշնակցական հօրեղբորդին զոհ չդառ-
նար զանազան թիւրիմացութիւնների եւ անախորժութիւն-
ների, երբ մերոնք իրանց ձեռքը կձգեն երկրի իշխանու-
թիւնը։

Այնուհետեւ, մօտ մէկ շաբաթ անցած, Բօրիսը կրկին
այցելեց ինձ։ Իրիկեայ պահին էր։ Մնաց մօտս համար-
եա մինչեւ ուշ գիշեր. և խօսում էր շարունակ։ Սովու-
րակա՛ւ Բօրիսն էր՝ զւարթ ու սրամիտ։ Վիւբայի մասին և
ո՛չ մի բառ մեր ամբողջ խօսակցութեան ընթացքում։

Ինչ՞ անցաւ մէկ-երկու շաբաթ։ Այդ ժամանակներից
էր, որ սկսեց տաճիկների արշաւանքը Հայաստանի դէմ։

Օրերն ու դէպքերը յաջորդեցին իրար և առաջ ըն-
թացան գահավէժ արագութեամբ։ Դսկ նոյեմբեր ամսը

ւայ վերջին օրը Թիֆլիզում իմացա՞ք հեռագրներին, որ
Դիլիջանում յայտարարուել է Հայաստանի սովետիզացիա ։
Վայրկենապէս, ի հարկէ, Արամը միտո եկաւ ։ Վաղե-
ցի Բօրիսի մօտ՝ իրանց թերթի խմբագրատունը, որտեղ
նա լինում էր շարունակ՝ աշաւօտից մինչև կէսօր ։ — «Ա-
նի՞ծ, ե՛ս դու, տղայ, — ճանապարհին ասի նրա հասցէին, —
ագռաւի պէս կռռացիր ախրան, որ վերջ ի վերջոյ կատար-
ւեց ասածդ » ։

Հայաստանի սովետիզացիայի բարիքն ու շարէքը, այդ
րոպէին ի վեր, պայմանաւորւած էր ինձ համար Արամի վի-
ճակով ։ Աբանտարկե՞ն, կգնդակահարե՞ն նրան, թէ՛ աշատ
կթողնեն . . .

Բօրիսը խմբագրատանն էր ։ Կանչել տւի դուրս, որպէս-
դի առանձին խօսեմ հետը, լսող չլինի ։

— Ա՛, գալդ բարի ։

Բայց ես շատ էի յուզւած ։ Նա նկատեց այդ և հարցրեց՝
թեւո մօնելով .

— Ի՞նչ է պատահել ։

— Լսիր, Բօրիս, — ասի ես ցածր, դողդոջ ձայնով, —
Հաստատ բան է՝ որ ձերոնք գրաւել են Դիլիջանը ։

— Այո, ի հարկէ ։

— Յիշում ես հօ իմ հօրեղբորդդուն՝ Արամ Սարգս-
ւան ։

— Ինչպէս չէ ։

— Այնտեղ հիմա նրան ձերբակալած կլինեն ։

— Ինչո՞ւ ես այդպէս կարծում ։

— Չեմ իմանում . . . միայն թէ եկել եմ քեզ մօտ՝
խնդրելու, որ դու գործի անցնես անյապաղ ։ Տեղեկացրու
ձերոնց, պատեղից հրահանքներ ուղարկեցէք ։ Բացատրիր,
պնդիր, պահանջիր ։ Արամի հանդէպ դուք բարոյական մեծ
պարտականութիւն ունէք, պիտի չդիպչէք նրան ։ Եթէ այս-
տեղից միջոցներ ձեռք չառնւին քո և . . . Լիւբայի կողմից . . .

այո, եթէ այդպէս չանէք՝ Արամը, հաւանական է, կվը-
տանգւի ։ Չէ՞ որ ինքդ էլ անցեալ անգամ ասում էիր ինձ,
թէ անխորթութիւններ և թիւրիմացութիւններ կարող
են տեղի ունենալ ։

— Այո, ասել եմ — պատասխանեց Բօրիսը՝ մտադրալ-
ւելով, — բայց, ախր, այս րոպէին ես ի՞նչ կարող եմ անել ։
Հայաստանի Ռեւկօմը անկախ մարմին է, ախր, մեզ ենթա-
կայ չէ. մենք այստեղից չենք կարող կարգադրութիւններ
կամ պահանջներ անել ։

— Ինչպէ՞ս անենք հապա, — բացակաւնեցի ես յուսա-
հատ ձայնով. — Լաւ է եթէ Արամը ժամանակին փախած
լինի Դիլիջանից ։ Բայց ո՞վ գիտէ, նրան գուցէ արդէն
բանտարկել են ձերոնք . . . Կգնդակահարե՞ն ։

— Ի՛նչ հասկացողութիւն ունէ՞ք մեր մասին, այ մարդ ։
Մեղ վայրենի գաղաններ էք կարծում՝ ո՛ւր մտնեք, բոլո-
րին անխնայ կոտորե՞նք պիտի ։ Մոլորութեան մէջն էք, ա-
մէնքդ էլ ։

Մոլորութիւն թէ ճշգրութիւն . . . միայն թէ կարողանա-
լիւք պահպանել ։ Ուստի, կրկին ու կրկին խնդրեցի, յոր-
դորեցի, շտապեցրի, որ Բօրիսն անի՝ բոլորը ինչ հնարաւոր է ։

— Այ մարդ, — երկրորդեց նա իր պատասխանը, —
հասկացիր որ՝ մենք իրաւունք չունենք խառնուելու Հա-
յաստանի Ռեւկօմի գործերին . . . Բայց կարող եմ քեզ ա-
սել, որպէսզի դու հանդստանաս որոշ չափով . . . ըրը . . .
(Բօրիսն իջեցրեց ձայնը) . . . կարծում եմ, տաւարիչ Վիւ-
բան կանի, ինչ հարկաւոր կլինի ։ Ինքը հիմա . . . այն
կողմերումն է ։

— Հաստատ գիտես — ձայնս հաղիւ պահելով՝ ֆարցրի
եւ և իմ աչքերը փայլատակեցին ուրախութիւնից (զգացի
այդպէս) ։

— Ի՞նչ խօսքով . . . հանդիստ կաց ։ Եթէ տաւարիչ
Վիւբան դեռ այնտեղ չի, յամենայն դէպս շուտով . . . ըրը . . .

... աւելին չեմ կարող ասել քեզ: Առայժմ ցտեսութիւն՝
Գնամ՝ յօգածս վերջացնեմ. սպասում են տպարանում:
Ցտեսութիւն... իմաց կտամ քեզ... Համբերութիւն,
համբերութիւն... Շուտով էլ՝ Արաստանը... Փիւտ:

Խմբագրատան սանդուղքից վայր իջնելիս, ինձ բռնականաչափ սիրտիւ ած էի զգում: Հանգստացել էի. բանի որ Վիւրան այն տեղ էր:

Այնուհետեւ սկսեցին ինձ համար՝ թէեւ անորոշ, բայց և անխռով օրեր: Հայաստանի սովետիկացիան ինձ այլևս գէշ բան չէր թւում:

Սակայն երկար չտեսեց իմ այդ հանգստութիւնը:

Սկզբում ո՛չ մի լուր չունեցայ Արամի մասին: Չկար հաղորդակցութիւն Հայաստանի հետ: Ես ամէն Ատուծոյ օր գնում գտնում էի Բօրիսին. բայց նա որոշ ոչինչ չէր կարողանում ասել: Ի՞նչ ասէր, երբ ինքն էլ բան չէր իմանում Արամի ճակատագրի մասին: Այնքանը միայն յայտնեց հաւաստիօրէն (եւ շատ մտերմաբար), որ Վիւրան գրտնւում է Գիւլիջանի շրջանում:

Ապա, անուղղակի ճամբաներով սկսեցին լուրեր հասնել Հայաստանից՝ Գաշնակցական գործիչների բանտարկութեան ու հալածանքի մասին:

... Ու մի օր էլ, անստոյգ լուրերից եւ անորոշ սպասումի խռովիչ ընթացքից յետոյ, որ տեսեց երկար, Արամի գնդահարութեան լուրն առի:

Ինքը Վիւրան, որ Չէկայի նախագահն էր եղած Գիւլիջանի շրջանում, ինքն իր ձեռքով ստորագրել էր մահւան դատով՝ ճիշտ:

Արամին, որ չէր կարողացել, կամ գուցէ եւ չէր ուզեցել ժամանակին հեռանալ Գիւլիջանից ու յետոյ բանտարկւել էր, Բոլշեւիկները յայտարարել էին «հակայեղախառնական ու աւաղակ»:

... Գնացի Բօրիսին: Ցասումով ու անզուսպ, երեսով տւի, որ բոլշեւիկներն իսկապէս եղել են վայրագ արիւնարբունք:

— Չկայ ձեզ համար, — ասի, — բարոյական ո՛չ մի պարտականութիւն ու սրբութիւն: Ատաթարաքոյն ձեռով հատուցիք Արամի արած լաւութիւնը: Ամենայեօրին աւաղակն անգամ չէր վարւի այդպէս...

— Հանգստացիր, այ մարդ, — մեղմութեամբ կրկնում էր Բօրիսը, — հանգստացիր...

Յուզմունքից՝ չունչս կտրւում էր: Ես կանգ առայ եւ դողալով նստեցի աթոռին (Բօրիսի բնակարանն էի գնացել): Բօրիսը, եղբի մեղմութեամբ, սկսեց ինձ համոզել.

Ա՛յ մարդ, ինչո՞ւ ես հայհոյում մեզ ամէ՛քիս: Մի՞թէ՛ չես հասկանում, որ հասարակական մեծ դէպքերին, սոցիալական հզօր յեղաշրջումների ժամանակ, անխուսափելի են ամէն տեսակի ջխտումներ, թիւրիմացութիւններ: Յուզմունքի մի կողմ դիր. եւ եթէ մի քիչ սառնութեամբ դատես՝ ապա, կարծում եմ, կհամաձայնես ինձ հետ, որ Արամ Սարգսեանի գնդակահարութիւնը, թերեւս, իրօք մի ցաւալի սխալ է եղած...

— Սխալ, թիւրիմացութիւն... — հեգնեցի ես դառնացած, — ո՛վ— ո՛վ բայց թէ ձեր Վիւրան իրաւունք չունէր այդպիսի թիւրիմացութեան մէջ ընկնելու:

— Սարգսեան սխալական է, սիրելիս...

— Իսկ սխալս՛լան լինելուց առաջ՝ մարդս ստո՛ր է ստո՛ր, — վրայ բերի ես՝ մէկէն բունկելով սուր ատելութեամբ դէպի Վիւրան, որի դէմքն այդ վայրկեանին պատկերացաւ մտքիս... Եւ ինքս ինձ պահել այլևս անզօր՝ պոռթկացի, յանկարծ. — Ձեր այդ Վիւրան իր վրէժն է հասնել մեր խեղճ՝ Արամից... Որովհետեւ սա բոլորովին անուշագիր էր թողել նրա սիրային զգացմունքները:

վրաստանն էլ, շուտով, դարձաւ սովետական: Յեղաշրջման պատճառով, առժամանակ խանգարեց հանրային տնտեսական կեանքը, եւ ես, ուրիշ շատերի հետ մէկտեղ, ժամերիս ու եռանդիս մեծագոյն մասը ստիպւած էի յատկացնել՝ հանապազօրեայ հացս ձեռք բերելու սպանիչ հոգսերին:

Կարեցի մարդկանցից ու աշխարհից: Տնից գրեթէ դուրս չէի գալիս՝ զբոսնելու կամ նման այլ նպատակներով: Չէի գնում ընկերներէս քով, եւ մասնաւորապէս Բօրիսին՝ բնաւ հասնելուց:

Լսում էի, սակայն, որ նա մեծ դեր է խաղում բաղաքի կուսակցական գործերում: Նրա ունենը գրեթէ ամէն օր երեւում էր լրագրի մէջ: Լրագիրը փակցւում էր փողոցներում՝ պատերին. ի միջի այլոց՝ մեր բնակարանին կից մի երկյարկան ի շինութեան պատին. և ես սովորութիւն ունէի ամէն առաւօտ կանգնել պատի առաջ և լրագիրը կարդալ:

Պէտք է ասեմ, որ Բօրիսն ինքը քանիցս լուր էր ուղարկել՝ որ հանդիպեմ իրան: Բայց չգնացի ոչ մի անգամ: Ինչ համար գեռ ծանր կլինէր խօսել նրա հետ. որովհետեւ եթէ խօսէի, չէի պահի ինքս ինչ և պիտի նորից զայրոյթ ու վրդովմունք արտայայտէի՝ Արամի վերաբերմամբ կատարած ոճրի առթիւ: Իր բնակարանում տեղի ունեցած մեր վերջին խօսակցութիւնը գէշ հետք էր թողել յիշողութեանս մէջ. սուր տհաճութեամբ առանձնապէս՝ մտաբերում էի իմ սոյն խօսքերը, որ ասել էի Լիւբայի սիրոյ մասին: Չպէտք է ասէի, վատ արի՝ որ ասի:

... Մի օր էլ, մի երկտող ստացալ Բօրիսից. «Ա՛ւր ես կորել, այ մարդ: Եկ, խօսելիք ունեւ հետդ: Քեզ մի աշխատանք ենք ուզում տալ՝ քո մասնագիտութեան վերաբարբերալ»:

Յետգրութեան էլ աւելցւած էր. «Չմոռանամ յայտնել, որ երեկ չայաստանից եկել է տաւարիչ Լիւբան»:

Լաւ չի զգում իրան: Ի միջի այլոց հարցնում էր. քո մասին կուզենար քեզ տեսնել, եթէ չեմ սխալւում»:

Չգնացի: Լիւբայի գալու տեղեկութիւնը ինչ-որ մի զգանք շարժեց իմ մէջ: Երեւն իսկ տեսնել չուզեցի: Նա ինչ համար դարձել էր մի չար հրէշ՝ գեղեցիկ կնոջ կերպարանքով: Ատելութիւնս անչափ էր ու անհաշտ:

Օրերը գալիս ու գնում էին:

Ապրիլեան մի առաւօտ, երբ արեւը բաւական բարձրացել էր անամպ երկինքն ի վեր, ես գնացի՝ պատի լրագիրը կարդալ: Եւ հէնց որ մօտեցայ պատին... աչքիս դարկեց «Տաւարիչ Լիւբա» անունը, որ տպւած էր լրագրի առաջին երեսին՝ խոշոր-խոշոր տառերով... սեւ շրջանակի մէջ, մահազդի ձևով:

... Այո, Լիւբայի մահն էր ծանուցւում ի գիտութիւն բոլոր կուսակցական ընկերների: Յանկարծական մահը: Թաղու՞մ էլ նշանակւած էր յաջորդ օրւան:

... Գնացի թաղմանը: Մահը ոչնչացնում է ամէն քէն և ատելութիւն:

Հսկայական, հանդիսաւոր էր յուղարկաւորութիւնը: Դազաղը կարմիր պատած՝ կորել էր պսակների տակ:

Ճառեր, դրւատիք, արցունք:

Ես էլ մի բուռը հող նետեցի դազաղի վրայ, գերեզմանի փոսի մէջ, Բօրիսի հետ միասին:

Երեսը չտեսայ: Որովհետեւ դազաղը փակ դուրս բերին տնից եւ փակ էլ պահեցին մինչեւ վերջը:

«Խեղճ աղջիկ: Կերթաս հիմա Արամի մօտ, — տըրտմութեամբ ասի ես՝ դազաղի խուփ կափառիչին մօտիկ անելով, — և գուցէ այնտեղ կհաշուէք իրար հետ»:

Գերեզմանատնից տուն վերադարձին Բօրիսը հետս էր: Լճու լուռ թեւս էր մտել ու մենք քայլում էինք մէկտեղ՝ մինչեւ որ հասանք բաղաք (գերեզմանատունը գտնւում էր

քաղաքից դուրս՝ մի բլրի ստորոտում)։

— Յտեաութիւն—խօսեց վերջապէս ու ձեռքս էլ սղմեց։ Սակայն չհեռացաւ. այլ մտածեց ինչոր, վարանեց... յետոյ գլուխը խորհրդաւոր ցնցելով՝ շուռ եկաւ գէպի ուրիշ կողմ, ճանապարհից անդին, թէ.— Գնամք մի քիչ... բեզ մի խօսք պիտի ասեմ։

Եւ ասաց...

— Հայաստանից երբ վերադարձաւ, նա ինձ թւաց շատ տխուր եւ մտատանջ։ Ես սկզբում չէի հասկանում։ Կարծում էի՝ տկար է։ Այո՛, չէի հասկանում պատճառը։ Զանազան ենթադրութիւններ եմ արել։ Բայց երէկ պարզեց ինձ համար, որ բոլոր ենթադրութիւններս սխալ են եղած... Երէկ, այո... ահա՛։

Բօրիսը գրպանից հանեց մի նամակ ու պահելով ձեռքին՝ մտիկ արեց մի պահ։ Չեւքը դողում էր։ Յոնքերն իրար եկան եւ գէմքը գունատել սկսաւ։

— Ահա՛— կրկնեց նա, նամակը մեկնելով իմ կողմը՝ առանց ինձ նայելու։

Երկձայ մի թերթիկ։ Բացի, որ կարդամ... Ստորագրած էր, ինձ արդէն ծանօթ՝ պարզ, դիւրընթեռնելի տառերով — «Վիւբա»...

... «Բօր, — գրել էր խեղճ աղջիկը — Չկայ այլևս իմ մէջ՝ դիմանալու ոյժ։ Մեռնեմ պիտի, չեմ կարող ապրել։ Մարդ եմ որովհետեւ, մարդկային մտից ու արիւնից։

Քե՛զ միայն հրաժեշտ եմ տալիս, վերջին հրաժեշտս։ Թոյնը պատրաստ՝ սեղանիս վրայ է, իմ աչքի առաջ։ Եւ մինչև որ նամակս բեզ հասնի ամէն ինչ կրինի արդէն վերջացած։

Միայն քեզ եմ գրում իմ մահւան մասին, որովհետեւ «դիտեմ» դու ինձ բուռն սիրում ես։ Վերջ եմ տալիս իմ կեանքին, — այսինքն իմ հոգեկան անտանելի տանջանք-

ներին, որոնց պատճառը, աղբիւրը՝ մի մարդու գնդակահարութիւնն է։ Մի մարդ, որին ես սիրում էի՝ սաստիկ, սաստիկ։ Բայց նա ինքը չէր սիրում ինձ։ Եւ ես վրէժս հանել ուզեցի։ Կարծելով՝ թէ կհանգստանայ հոգիս, երբ այլևս այդ մարդը գոյութիւն չունենար։

Հաշիւս սխալ գուրս եկաւ։ Ես նրան յետոյ էլ սիրում էի ինչպէս կենդանութեան ժամանակ։ Եւ սկսեցին իմ տանջանքները։

Ի՛հ, ասեմ ո՛վ էր... Արամ Սարգսեան։

Չեմ հաւատում, ի հարկ է հանդերձեալ կեանքի յիմար պատմութիւններին։ Բայց եթէ այնուամենայնիւ կայ այդ սուսուպելական աշխարհը, ապա այնտեղ, անշուշտ, կհանդիպեմ Արամին։ Կչոքեմ նրա հոգու առաջին... եւ նա ինձ կների։

Դու էլ ինձ ներիր, Բօր...

Մնաս բարեւ։ Մնաք բարեւ, բոլոր իմ կուսակցական ընկերներ։ Չեր Վիւբան թուլակամ չէր. բայց մարդկային տառապանքը նրանից աւելի զօրաւոր եղաւ։

Վ Ե Ր Ջ

ՎՐԻՊԱԿ

Էջ	ՎԵՐԻՑ ՏՈՂ	ՏՊՈՒԱԾ Է	ՊԻՑԻ ԼԻՆԻ
7	"	6	իրաւ է
10	"	3	նայում... նայում էի, նայում...
10	"	6	այլէ...
37	"	14	ակտակի կատակի

56-481